


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԾԱԿ ԿԱՐ ՈՒ ԵՒ Ե ԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏՐ Ե ՈՂՁ, ԱՍ
Խմբագր. ԱՐՇԱԼՈՒՅՍ լրագրի
ԳԱՇԻՐԷ (Հասցեականի)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABGANIEM LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՎՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան, որը դահլից. 60
Վեցամսեայ » 35
Տարեկան Ֆրանկ 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՆԻԿ Ե
ՆԱԹՂՄԱՏԱՐԻ ՄԱՌԵ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնի և չ'են տրուիր:

ԱՐՏՆԻՆ ՀՈԳԵՐ

Վարժարանական հարցն է դարձեալ
օրուան խօսակցութեան նիւթը:

Բարդ ի բարդ խօսքերու հեղեղ մ'է
որ « Արշալոյս » ին կ'ուղղուի, թէ ինչու
վարժարանի խնդրոյն մէջ ինքզինքը ար-
դարացուցած է մէկ կողմ՝ ելած է. թէ
պէտք չէ՞ որ վարժարանին վրայ խօսելու
ատեն, ցոյց տար նաև ա'յն միջոցները,
որոնցմով կարելի էր վարժարանի բարե-
կարգութիւնը ձեռք բերել: Ուրեմն « Ար-
շալոյս » ստուգիւ մեղադրելի է:

Այդպիսեայ « Արշալոյս » իր պատաս-
խանը կը կրկնէ, ըսելով թէ՛ այդ մեղադ-
րանքները պէտք է ուղղել ծնողաց և հայ
ազգայնոց՝ որոնք բիւր անգամ առելի յան-
ցաւոր և մեղադրելի են. ինչու՞:

Որովհետև ծնողքները իրենց զաւակ-
ներուն կրթութեան համար առաջին և միակ
պատասխանատուներն են և բոլորովին ան-
հոգ ու անտեղեակ են թէ՛ ի՞նչ կ'անցնի
կը դառնայ վարժարանին մէջ. թէ 10—12
տարեկան աղաքները դասարանակա՞ն ըսուած
դրութեան մէջ, հսկողութեան զուրկ, ի՞նչ
ընթացք ունին. թէ ի՞նչ դասեր կ'աւան-
դուին անոնց՝ օրուան բոլոր ժամերուն մէջ.
Թէ վերջապէս՝ վարժարան ըսուած բանը
ինչի՞ պէտք է որ ծառայէ նոր սերունդին
համար:

Ահա այս ամենէն անտեղեակ, միեւնոյն
ժամանակ անհոգ ու անտարբեր ծնողքներն
են, որ ամէն յանցանք « Արշալոյս » ին կը
վերագրեն, ըսելով թէ՛ նա վարժարանի մէջ
բարեկարգութիւն մտցնելու եղանակներուն
վրայ բան մը չ'գրեր, միջոցներ ցոյց չ'տար
վարժարանը բարեկարգ վիճակի մը վերա-
ծելու համար:

Ծնողքներ՝ ահաւասիկ այն միջոցները՝
որ « Արշալոյս » կրնայ ձեզի առաջարկել
հրապարակու:

Ազգային իշխանութեան մը — որուն
իրաւասութիւններն չ'ընդունելու պատճառ
մը չ'ունինք՝ եթէ անոնք օրինաց շաւղին մէջ
ընթանան — տրամադրութեան տակ դրուած
է վարժարանի հսկողութիւնը: Այդ ժողով-
ները հետեւեալներն են:

Ա. Երեսփոխան ըսուածներն, որոց
թուոյն վրայ անցեալ օրեր չորս նոր ան-
դամներ ալ բարդուեցան, գրեթէ առանց

ձեռ գիտութեան և առանց ձեռ սեփական
օրէնքին տրամադրութեանց կէտ առ կէտ
հետեւելու:

Եկեղեցւոյ բակին մէջ անոնց ընտրու-
թեան մասին պաշտօնական յայտարարու-
թիւններ կ'ախուեցան, որ ո՛չ գնացիք հոն՝
և ո՛չ ալ կարգացիք և նոյն իսկ հետա-
քրքիր ալ չ'եղաք թէ ի՞նչ նպատակաւ այդ
թուղթերը օգտածածն կը սատանին եկե-
ղեցւոյ բակին մէջ փչող հրվերէն . . . :
Ահա այսպէս չորս երեսփոխան անդամներ
ընտրուեցան:

Բ. Քաղաքական ժողովոյ անդամներն,
որ Երեսփոխան ժողովին փոխանորդներն են.
անոնցմէ ընտրուած՝ և ազգին ու ազգու-
թեան վրայ զիրենք ընտրողներո՛ւն պէս
միայն մտածելու իրաւունքին մէջ սահմա-
նափակուած:

Գ. Քաղաքական ժողովէն կը բղխի
վարժարանի հոգաբարձութիւնը ըստ Սահ-
մանադրութեան: Արդի հոգաբարձուն Երես-
փոխան ժողովի անդամներէն մէկն է: Արդ,
ի՞նչպէս կ'ուզէք որ Երեսփոխան ժողովէն
ընտրուած և անոր փոխանորդը եղող ժո-
ղովականներ յանգզին իրենց իրաւունքը
համարել քննադատելու հոգաբարձու մը,
որ զիրենք քաղաքական ժողովոյ անդամ-
ներուն վրայ բազմեցուցած է:

Մեր Քաղաքական ժողովոյ անդամնե-
րէն այդչափ անխոհեմութիւն կրնա՞ք յու-
սալ որ զիրենք երկնող ծնողաց դէմ ըմ-
բոստանան, այսինքն Երեսփոխան ժողովոյ
անդամի մը ըսն թէ, « գո՛ւն վարժարանը
կառավարելու նրբութեանց անտեղեակ ես,
քու պտշտօնավարութիւնդ մեր սեզանին
վրայ գանգատներու ծրարներ բարդած է,
գո՛նէ հրատարէ, որ տեղդ ազգային զգա-
ցումով տողորուած, ազգային մանկուոյն
օգուտը նախատեսող և վարժարանին յա-
ռաջիմութիւնը սիրող ու ձեռնհաս ան-
դամներ յաջորդեն »:

Այս խօսքերը ըսելու աստիճան ապե-
րախտ կը կարծէք մեր Քաղաքական ժո-
ղովի անդամներն. անոնք չե՞ն գիտեր որ
հոգաբարձուն անմիջապէս պիտի պատաս-
խանէ իրենց. « Ես ձեզի այդի մը — Քաղաք-
ժողովի անդամները — նուիրեցի և դուք ինձի
ողկոյլ մը խաղող — հոգաբարձութիւնը —
չէք կամենար »:

Խօսքերու այս փոխանակութիւնը տեղի
չ'ունենալու համար, ո՛չ Քաղաքական ժողովը
բան մը պիտի ըսէ հոգաբարձուին և ո՛չ ալ

հոգաբարձուն ինքնիրեն պիտի պզայ թէ՛
ինք այդ գործին մարդը չէ. և վարժարանն
ալ այսպէս կազն ի կազը պիտի քալէ,
մինչև որ հանգուցեալ կարապետ Գալըս-
տեան սակորներն գերեզմանին մէջ խու-
ված — յարութիւն առնէ և դոյ բողոքելու
թէ՛ իր ըրած կտակը կատարի ի վերածուած
է և օգտակարապէս իր նպատակին չը գոր-
ծածուիր, խղճմտալից և բարոյական պա-
տասխանատուութեան ծանրութիւնը ըմբո-
նող ձեռքերու չը յանձնուած ըլլալուն համար:

Հիմակ գանք միջոց ին, որոյ մասին
չ'գրած ըլլալնիս լմեզ մեղադրելի կընէ
եղեր:

Ըսինք որ Երեսփոխան ժողով մը կայ,
որուն կ'ատենապետէ Տիգրան փաշա Պէտք
է որ ծնողքները տեղ մը հաւաքուին և
վարժարանին տխուր վիճակը կենդանի
գոյններով պատկերացնող օրինաւոր տեղե-
կագիր մը պատրաստելով ստորագրեն և
ներկայացնեն նորին վստահութեան:

Վստահ պէտք է ըլլան ասկայն թէ՛
Փաշան զիրենք մտիկ չ'պիտի ընէ, որովհետև
նա կ'ըսէ եղեր թէ, եթէ ստոյգ է, պէտք չէ՛
Պէյն ալ ապակսօնէ ընել, ի՞նչ օգուտ:

Այսպէս ընելով ծնողք իրենց պարտքը
կատարած կըլլան օրինաւոր ուսմանի մը
մէջ, ինչպէս որ Առաջնորդարանը նոր երես-
փոխաններու ընտրութեան ժամանակ Եկե-
ղեցիին դուռը յայտարարութեան մը կա-
խելով օրինաւորութիւնը գործադրած հա-
մարուեցաւ:

Այնուհետև ծնողքներուն կը մնայ միա-
բերան իրենց զաւակները վարժարան
զրկելէ դադարեցնել, որ գոնէ ասով իրենց
զաւակաց՝ հսկողութեան չ'ընդունելու դասարա-
նական դրութեան մէջ կորսնցուցածը չահած
ըլլան: Օր մը. երկուք, չորս, տասը, վեր-
ջապէս Քաղաք. ժողովը պիտի ստիպուի
հոգաբարձուին ըսել, « դուն զիս չ'ծնար,
ես ժողովուրդին զաւակն եմ և անոր բարո-
յապէս ու նիւթապէս պատասխանատու,
ուրեմն ժողովուրդին փափաքանացը համա-
ձայն՝ քու անտեղ ուրիշներու պիտի յանձ-
նուի, որ պէտք եղած կերպով մատակարա-
րեն վարժարանը և կտակը իր նպատակին
ծառայէ օգտակարապէս »:

Ահաւասիկ միջոցը, որ միայն կարող
է վարժարանը վերել իւր արդի անկեր-
պարան վիճակէն և գանգատները նուազե-
ցնել:

ՆԵԼՍՈՆ

Հ Ե Ռ Ա Ք Ի Ր

Հոնտոն, 7 փետրվար.

Չորավար Պուլլըր հորէն թիւթէլան անցաւ փետրվ. 5ին եւ գրաւեց փոքրիկ բլուր մը ի Պրաք-Պոնթէյն բայց, միւս կողմանէ, զօրավար Ժուլիէր կամուրջէն եւ հունէն ետ քչեց անգլիական զօրագունքերը՝ կրել տալով անոնց ծանր կորուստները:

Հոռո, 7 փետրվար.

Արքայական հրաման մը կը վերցունէ այն բոլոր մասնաւոր գործողութիւնները, որոնց ենթարկուած էին Եգիպտոսէ եկած իրերը:

Գար. 7 փետրվար.

Հորտ Բոպըթս եւ Հորտ Քիչնէր Քարէ մեկնեցան անորոշ ժամանակի մը համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Գերմանական հիւպատոսարանին կցորդը, Պարոն Մաքս Օբէնհայմ, վեց ամսուան ճամբորդութենէ մը յետոյ՝ որ գիտական ուսումնասիրութեանց համար Ասիական թուրքիա կը գտնուէր, անցեալ կիւրակէ Գահիրէ վերադարձաւ:

— Տիկին Ուինկէյթ դաշտային հանդէս մը տուաւ ի Կէզիրէ. հանդէսը շատ ոգևորեալ էր. հրաւիրելոց թիւը 400ի կը հասնէր:

— Ամսոյս 17ին 300ի չափ Ամերիկացի զբօսաշրջիկներ կ'սպասուին ի Բորդ-Սայիտո իրենց համար մասնաւորապէս վարձած են «Նիւ Ինկլէնտ» շոգենաւը եւ ուղղակի Նիւ Եօրքէն Գահիրէ կ'ուզան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ԹՈՒՐԻՔԻԱ

27 յունվար թուակրաւ հետեւեալը կը հեռագրեն Կ. Պօլսէ.

« Իտալական զեսպանատունը ազգուկերպիւ կը բողբէ ի Պրուսա Իտալացի անչափահաս աղջկան մը առեւանգումին դէմ՝ որ հարեմ տարուած է: Գեոպանատան առաջին բողբարկութեանց վերայ՝ կառավարութիւնը ետ առաւ մանկամարդ աղջիկը, բայց զատական նախարարութիւնը մերժեց զայն յանձնել իտալական իշխանութեան, պատրուակ բռնելով թէ իսլամութեան դառնցած է: Իտալական զեսպանատունը կը

յայտարարէ թէ՛ այս վար դնելին կը նշանակէ հայրական իրաւանց բռնաբարում մը անչափահաս ուղու մը վերայ»:

30 յունվար, Կ. Պօլսիս

« Դատական գործոց նախարարը, հիմ բռնելով միւսիւրման օրէնքը՝ որ արբունքի տարիքէն չափահասութիւնը կ'ընդունի, չ'ընդունեց իտալական զեսպանատան կողմանէ ի մէջ բերուած հայրական իրաւունքները եւ մէկին կերպիւ մերժեց իտալացի յափշտակուած մանկամարդ աղջկան յանձնումը: Կը կարծուի թէ զեսպանատունը Գրան հետ իւր դիւանագիտական յարաբերութիւնները խզէ:

1 Փետրուարին քաշուած հեռագիր մը աղջկան հօրը յանձնուելը կ'իմացունէ:

— Պօլսէն եկած լրոց նայելով, Սուլթանը իմթիպաղի պատուանշանը շնորհեց է Ֆրանսայի Հանրապետութեան նախագահին: Արտասովոր պատգամաւորութիւն մը անցեալ երկուշաբթի ճամբայ ելեր է Պ. Լուպէի տանելու համար աղամանդեայ պատուանշանը: Այս պատուիրակութեան պետն է Սուլթանին թիկնապահներէն Ապտուլլահ փաշա: Հաւանականաբար այս օրերս կատարուի այս պատուանշանին պաշտօնական յանձնումը Ելիզէի մէջ:

Պօլսոյ Գեոպանը Պ. Գոնսթան Բարիզ մեկնած է ներկայ գտնուելու համար արարողութեան:

ԿՐԵՏԷ

Կրէտէի կառավարիչ Ժորժ Իշխանը Գանէ վերադարձաւ: Արքայական ընտանիքը իրեն ընկերացաւ մինչև Միլոս. իսկ Մառի իշխանուհին Կրէտէ մեկնեցաւ իրեն հետ, ուր շաբաթ մը պիտի մնայ: Ժորժ Իշխանին յետոյա ընելիք ճամբորդութեան մասին չըլած զրոյցներուն գալով, կը հաստատուի թէ Իշխանը մտադիր է մօտերս շատ մը արքունիքներ այցելել, բայց սակայն՝ արքունեաց այս մասին տակաւին իմաց տրուած չ'է: Կ'ըսուի թէ՛ այս ճամբորդութիւնը ամուսնական ծրագրի մը հետ կապ ունի. բայց տակաւին բան մը չի գիտցուիր:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆ

Կը հաստատուի թէ՛ Միւզէֆֆէր-էտ-Տին Շահը որոշած է Պեռլին եւ Բարիզ այցելել: Ապրիլի մէջ ճամբայ պիտի ելլէ իրեն պիտի ընկերանայ իւր երկրորդ որդին Մալէք Մանսուր Միրզա, որ արդէն գրեթէ տարի մը առաջ Եւրոպա եկած է առողջութիւնը խնամելու համար:

— Ալպանիոյ մէկ մասը — որ թրքական նահանգ մ'է — հրոյ եւ արեան մէջ է: Չորավար Մահմուտ, թուրք զօրքերով մեկնեցաւ եւ անդ յօրէն կը շարժի Իսկիւպի, Մոնասթրրի, Գէնի մէջ եւ ամենդրեք ուր որ խռովութիւն կայ:

Իփէքի եւ Շալթէի մօտերը արիւնոտ կռիւներ տեղի ունեցան, մեծ թուով մեռեալներ կը հանուին: Այս լուրերը բերող թղթաբերը թուրք զօրաց կողմանէ վար դրուեցաւ:

ՍԵՐՊԻԱ

Պալքանեան թերակղզւոյն մէջ այժմուս կատարուած դէպքերը մեծ կարեւորութիւն ունին. որովհետեւ հուանականաբար անուղղակի հետեանքն են թէ՛ Հարաւային Ալբրիկէի պատերազմին եւ թէ՛ Արեւելեան խընդրոյն մէջ շահ ունեցող կարգ մը կառավարութեանց ձեռքի տակէ հնարքներուն:

Ամսէ մ'ի վեր Սերպիա տենդոտ կերպիւ կ'սպառազինուի. Գերմանիոյ ապսպրանք տուած է թնդանթիւ եւ Պելճիգայի ալ հրացան: Ռուսաստանը մամուլը խորհուրդ կուտայ կառավարութեան ամէն պատահարաց պատրաստ գտնուելու:

ԹՐԱՆՍՎԱՆ

Տիւրպանէ կը հեռագրեն Սթանտարտոյ 27 Յունվար թուակրաւ:

«Օրանթէ մէկը եկած է եւ կ'ապահովցունէ թէ Պօէրք կատարելապէս իմացած էին զօրավար Պուլլըրի ծրագրած շարժումները:

— Անգլիական թերթերը կը գրեն թէ՛ Րիչչօթթի Կարիպալտի ուզած է իբրև կամաւոր ծառայել Անգլիական բանակին մէջ: Պատերազմական նախարարութիւնը մերժած է այս առաջարկուած ծառայութիւնը:

— Արիոն Գորէ «Տէյլի Մէյլ»-ի կը հեռագրեն 28 Յունվար թուակրաւ թէ՛ երբ Անգլիացիք նախորդ օրը Սթան Գաբի գազաթը հասան, միայն մէկ Պօէր հոն գտան՝ զոր սուրինի հարուածներով սպաննեցին:

— «Ուէսթմինիսթըր կալէթ» կ'ըսէ թէ՛ Լէտրամիթի շուրջի Պօէրք զօրավար Հուայթի մէկ ելքին կ'սպասեն:

— «Մօնիթէօռ Ինքիվէրսէլ» կ'ըսէ թէ՛ Պօէրներուն գունդին մէջ կը գտնուի Պ. Թիւրքէն, որ նշանաւոր է իւր գիւտերովը: Քիմպըրէի վերայ արձակուած քարիւղէ ուռմբերը ինք շինած է եղեր:

ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ եւ է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼէՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ եւ է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ եւ հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի եւ աւելի ապահովագրի կը գտնուէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. ՄԱԼԷՔԱՆԱԳՐԻԱ:

«Թայմը» կ'ըսէ. «Առկից մինչև մի քա- նի օրեր Լէտամիթէ անձնատուր կը լինի: Պէտք է ասոր սպասել և համակերպիլ: Մեր բոլոր բանակները խափանուած և ան- շարժութեան դատապարտուած են: Պատե- րալմը շարունակելու համար հարկւր հա- զար մարդոց ևս պէտք ունինք: Այս թիւը կրնայ չափազանցեալ նկատուիլ: Բայց պա- րագաներուն պահանջածէն վեր չէ:

—Իրզպօնայէ «Միջանորտ»ի քաշուած հեռագիր մը կ'ըսէ թէ՝ Բօրթուղալ պիտի ստիպուի Լօրէնսօ-Մարքէզի նաւահանգիստը և երկաթուղին Անգլիոյ թողուլ:

«Համպուրկէր Նախրիթէն» այս մասին խօսելով կը յաւելու թէ՝ Պ. տը Պիւլով տակաւին պատասխանած չէ Ֆրանսայի և Ռուսիոյ գետնանայ, որք փափաք յայտնած են իրենց միանալու՝ հաւաքաբար բողոքե- լու համար Անգլիոյ Տէլուիօս պէյի գրաւ- մանը:

ՏՕՆ ՍԷՉԱՐ ՏՐ ՊԱՉԱՆ

Տիրա Թասուլեանն իւր Բ. ներկա- կայացումը Փետրվ. 4ի կիրակի գիշերը առաւ ինչպէս ծանուցուած էր «Արշալոյս»ի մէջ: Մեծ վարպետը այս անգամ առաջինէն աւելի մեծ յաջողութեամբ անցուց ներկա- յայցումը:

Իր մասին գովեստներ չուայել աւե- լորդ է, որովհետև թատերասրահը խըռ- նուած բազմութիւնը անդադար ծափահա- րութիւններով կը գնահատէր արդէն հին գերասանը և անշուշտ առիթը ներկայա- ցած ատեն պիտի խոստովանին նաև թէ, հայ արթիւքը արժանի է ամեն տեսակ քա- ջալերութեան և աշակցութեան: Ուրիշ ա- ռանելութիւն մը որ ունի Տ. Թասուլեանն, թատերախաղերուն ամենէն բարոյալիցներն և փայլուններն ընտրած ըլլալն է:

Տ. Թասուլեանն մտերւոյ Աղէքսանդր- րիա կը մենի ԱՐՔԱՅՆ ՉԲՕՄՆՈՒ ներկա- յացներու համար, ազգայնոց ոմանց կողմա- նէ եղած հրաւերի մը համաձայն:

Տարակոյս չունինք թէ՝ բազմամեայ վաստակաւորը պէտք եղած քաջալերու- թիւնը պիտի գտնէ Աղէքսանդրիոյ թատե- րասէր հասարակութեան կողմէ:

Գահիրէ 6 Փետրվ. 900 Ա.

ՏՕՔՓԵՏՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ
Ամերիկեան Աօսմաբոյժ
Ապօին Եարե Բուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա- սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղաներ:

Կը դադրեցնէ վայրկեանայէն ախուսի ցա- ւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե- սակ հիւանդութիւններն:


Իր լեցուցած աղաներուն տոկունու- թիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղբատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3—5:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԻՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԳ

ՇԱՐԷ-ԱՊՏԻԻԼԱՉԻՉ



Թէյի գործածութեան նէգաաներա- լովն, թէյի ճաշակն ևս նըբացած է, որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատև և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառու- թեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածաննի- է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մաս- նաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազ- մապան յւ մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻ- ՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ԱԷՅԼԱՆԻ և ՀՆԻԿԱՍ- ՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոյմէ արդէն հասած է մեղ. ինչպէս նաև ձը- մեռնական եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ ժամանակներու ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, ձր է՝

Ուղղամտութիւն Թէյերու սեւակի, կօխի ևս գնց մտախն:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեղի եղած ԿԱՆԻԿԻ գրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

15 — 30

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 9 ՓԵՏՐՈՒՄԸ 1900

Ա. Թիւ	4271	չաճած է	Ֆրանք	1000
Բ. "	6902	"	"	200
Գ. "	4715	"	"	100
Դ. "	1143	"	"	50
Ե. "	4044	"	"	50

Հետեւալք	25	աղան փրանք	կը չահին		
844	3045	333	2309	488	3719
2260	8011	4309	8727	2864	1032
2092	4389	4423	7622	9042	6177
	5192	2961	8797	7534	

ԾԱՆՕԻԹ. — Այն չահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան անտուկին սեփա- կանութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐՏԻՆԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԴ

Ամենափափուկ ստամբս ունեցողնե- րուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացա- գործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեճակէն չեն, դժուարամար- սութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կրնն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց չաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

ՀԱՏԿԱՉԵԱՆ ՓՈՒՈՇ

Օռօգի Պաֆ վաճառասան մօտերը, Կամե-էլ-Պեմաթի ցիօս դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւն- ներէն քաջալերուած, պատու ունին յայ- տարարելու թէ՝ իրենց փուռին մէջ պատ- րաստուած ընտիր հացերը զուտ և անխար- գալս ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգլիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջեղի ըլլալու պայ- մանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ՝ ամենամեծ կիսամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պաքսիմաթներ ևս յն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձ- նարարութիւնը ամենայն ճշ գութեամբ և փութով կը կատարուին:

28—30

ԱՏԱՄՆԱԲՈՅ

ՏՔ. ՊԵՏՐՈՍ ՆԻԿՈՂԵՄՈՍ

Տոկուն և մարգարտաշար աղաներ ու առողջ լինաւր ունենալն ոչ միայն մաքրուս գեղեցկութեան կը նպաստէ, այլ առողջ կա- յենալ ապրելու առաջին պայմանն է: Տիրա Պետրոս Նիկողեմոս, վկայեալ ատամնաբոյժ, որ երկար ատեն Բարիլու մէջ ատամնա- բուժութեամբ զբաղած և արհեստին նորա- նոր կատարելութեանց խիստ մօտէն հետե- ւած է, այժմ՝ քաղաքս վերադարձած և էղպէքիյէ մրանսէյ վաճառատան ճիշտ դի- մացի արարողանին մէջ ատամնաբուժական աշխատանոց մը հաստատած է, ուր ամեն օր պատրաստ է իրեն գիմնդներն գոհացնել թէ արհեստին յաջողակութեան և թէ գնե- րու յոյժ չափաւորութեան տեսակէտով:

Հինգ շաբթի օրերն կէս օրէ վերջ ժամը 3էն 5 ձրի դարմանում: